ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-26/30

ք. Երևան «04» մարտի 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի, որը գործում ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿը, ի դեմս տնօրեն Գևորգ Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ուսուցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 23 683 275 (քսաներեք միլիոն վեց հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենդրությամբ սահմանված հարկերը և այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց Կատարողին վճարում է ծառայությունների մատուցումից հետո, հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 10/տաս/ բանկային օրերի ընթացքում: Վճարումը կատարվում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ

տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 .Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի

լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող

ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայություն	«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Արմենակյան 129	**Հասցե՝** ք.Երևան, Մովսես Խորենացու փող., 162ա շենք
ՖՆ գործառնական վարչություն	**ՀՎՀՀ՝** 02509478
ՀՀ 900001010538	ՀՀՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00476409	**հ/հ** 900018004821
Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար	**Տնօրեն՝** Գևորգ Սիմոնյան
Լ. Ալեքսանյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«04». «Մարտի» 2026թ. կնքված
ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-26/30 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ*	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը
1	Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև	դրամ	23 683 275	1	Արագածոտնի մարզ, Կարբի համայնք, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, N 56 շենք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ.

***1 խումբը ≤ 25 մասնակից՝ 2 153 025 ՀՀ դրամ**

ՇՄՆ էկոպարեկային ծառայողների տեղեկացվածության, գիտելիքի բարձրացման և կարողությունների հզորացման ծառայությունների ձեռքբերման

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Գնման առարկան պետք է ունենա հետևյալ տեխնիկական բնութագրերը

1	Ծառայության անվանումը	Էկոպարեկային ծառայողների տեղեկացվածություն, գիտելիքի բարձրացում և կարողությունների հզորացում
2	Ծառայության տեսակը	Տեղեկացվածության և գիտելիքների բարձրացում, կարողությունների հզորացում
3	Ծառայության իրականացման վայրը	Ուսուցման կենտրոն - Արագածոտնի մարզ, Կարբի համայնք, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, N 56 շենք
4	Ծառայության իրականացման ժամանակա-հատվածը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև - 25.12.2026թ.
5	Նախապատ-րաստման փուլ և ելակետային տվյալների ձեռքբերում	- Կատարողը պետք է ուսումնասիրի Պատվիրատուի կողմից տրամադրված ծրագրին առնչվող նախնական տվյալները: - Սերտորեն համագործակցի Պատվիրատուի և Էկոպարեկային ծառայության հետ:

		- Իրականացնի էկոպարեկային ծառայողների կարիքների գնահատում՝ դասընթացների թեմաների ճշգրտման նպատակով, շահառուների խմբերի ձևավորում և նախնական անվանացանկի կազմում: - Ներկայացնի առաջարկություններ՝ տեղեկացվածության և գիտելիքների բարձրացման դասընթացի թեմաների և իրականացման ժամանակացույցի վերաբերյալ: - Համագործակցի Պատվիրատուի հետ՝ կազմակերպելով համապատասխան քննարկումներ ծագած խնդիրների վերաբերյալ:
6	Ծառայությանը ներկայացվող հիմնական պահանջները	Ծառայությունների իրականացման փուլում Կատարողը պետք է նախապատրաստման փուլի և ելակետային տվյալների հավաքագրման, ամփոփման և վերլուծության հիման վրա իրականացնի. - յուրաքանչյուր թեմային հատկացված դասընթացների, գործնական պարապմունքների և մասնակիցների թվաքանակի հստակեցում, - ծառայությունների իրականացման պլանի, ժամանակացույցի մշակում և համաձայնեցում Պատվիրատուի և էկոպարեկային ծառայության հետ: ***Դասընթացների/դասախոսությունների կազմակերպումը*** Դասընթացների կազմակերպման համար պետք է հիմք ընդունվեն հետևյալ հիմնական սկզբունքները՝ - Դասախոսություններն իրականացնել տեսական գիտելիքների մատուցմամբ՝ ընդգրկելով ժամանակակից միջազգային փորձը, թեմային առնչվող գրականությունը: Նպատակահարմար է նյութը մատուցել Power-Point ներկայացմամբ, ինչպես նաև ունկընդիրներին տրամադրել դասախոսությունների թեմաների սեղմ պատճենները: - Ուսուցումը կազմակերպել այնպիսի ժամանակացույցով, որ յուրաքանչյուր դասախոսության ավարտին հնարավոր լինի կազմակերպել քննարկումներ մատուցված նյութի վերաբերյալ և ստուգել ունկնդիրների ստացած գիտելիքների մակարդակը: - Յուրաքանչյուր դասընթացի սկսելուց առաջ և ավարտին կազմակերպել գնահատում և առաջարկությունների հիման վրա մշակել միջոցառումներ՝ դասընթացների արդյունավետության բարձրացման նպատակով: - Կազմակերպել ունկնդիրների ուսուցանումը անտառօգտագործման և նրա տեսակների, անտառների պահպանության ու պաշտպանության, ըստ հիմնական նշանակության անտառների դասակարգման, սանիտարական հատումների և դրանց տեսակների, անտառային օրենսդրության և դրա խախտման մասին: - Ունկնդիրներին ուսուցանել տեսական և գործնական մաս ներառող Հատուկ դասընթացներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1023-Ն որոշման համաձայն: - Կատարողը Ծառայությունը մատուցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

		Անհրաժեշտ ռեսուրսները և պայմանները Կատարողը պետք է համագործակցի և իրականացնի. - Դասընթացները 11 խմբի համար, 5 օր տևողությամբ՝ Արագածոտնի մարզ, Կարբի համայնք, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, N 56 շենք հասցեում: - Շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր մասնագետների հաստիքներ զբաղեցնող ծառայողները դասընթացներին մասնակցության ժամանակահատվածում պետք է Կատարողի կողմից ապահոված լինեն անվճար գիշերակացով (վերջիններիս ցանկության դեպքում)՝ նույն հասցեում գտնվող կացարաններում և ապահովվեն անհրաժեշտ հիգիենիայի պարագաներով: - Կատարողը Էկոպարեկային ծառայության ծառայողներին պետք է ապահովի սնունդով՝ սույն գնման հայտին կից ներկայացված Էկոպարեկային ծառայության կողմից հաստատված ճաշացանկին (մենյու) համապատասխան: - Դասընթացների իրականացման ժամանակահատվածում Կատարողն ապահովում է Երևան քաղաքից դեպի Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 հասցե (և հակառակը՝ դեպի Երևան) ուղևորափոխադրումը՝ ունկնդիրների ցանկության դեպքում: - Կատարողը դասընթացների մասին պետք է կազմի արձանագրություններ: - Դասընթացների ավարտական ամփոփաթերթը, մասնակիցների կողմից ստորագրված և կնքված արձանագրությունների պատճենները պետք է ներկայացնի Պատվիրատուին: - Ունկնդիրների նախնական ցուցակները պետք է տրամադրվեն Էկոպարեկային ծառայության կողմից, որի մեկ օրինակը անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին: - Գործողությունների իրականացման համար Կատարողը պետք է խորհրդակցի Պատվիրատուի և Էկոպարեկային ծառայության հետ: ***Ծառայությունների մատուցման պարբերականությունն ու որակը.*** Ծառայությունները պետք է իրականացվեն 5 օր տևողությամբ՝ դասախոսական ժամերը զուգորդելով գործնական պարապմունքների հետ: Ծառայությունը համարվում է Կատարողի կողմից պատշաճ մատուցված, եթե համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված կարգին և պայմաններին:
7	Ընդհանուր դրույթներ	- Կատարողի թիմի անդամները պատասխանատու են տեխնիկական առաջադրանքով նախատեսված ծառայությունների պատշաճ իրականացման համար: - Բոլոր դասընթացներում Էկոպարեկային ծառայությունը պետք է ապահովի կանանց հնարավորինս առավելագույն ներգրավածություն:

		- Տեղեկացվածության և գիտելիքների բարձրացման ծառայություններում պետք է ընդգրկվեն 275 (11 խումբ, յուրաքանչյուր խումբը 25 մասնակից) շահառու: - Մասնակիցներին պետք է տրամադրվեն գրենական պիտույքներ (մեկ հատ սովորական կապույտ գնդիկավոր գրիչ և մեկ հատ նոթատետր (առնվազն՝ 40 թերթանի):
8	Համաձայնե-ցումներ	Ծառայությունների իրականացման պլանը և ժամանակացույցը համաձայնեցվում է Պատվիրատուի և Էկոպարեկային ծառայության հետ:
9	Հաշվետվութ-յուններին ներկայացվող պահանջները	Հաշվետվությունները պետք է կազմվեն յուրաքանչյուր իրականացված գործողության համար, որոնք պետք է ընդգրկեն. - Պատվիրատուի և Էկոպարեկային ծառայության հետ համաձայնեցված դասընթացների ծրագիրը, իրականացման պլանը և ժամանակացույցը: - Դասընթացների իրականացման ակտը, անվանումը, մասնակիցների ցուցակները, որտեղ պետք է նշված լինի մասնակցի անունը, ազգանունը, դասընթացի իրականացման ամսաթիվը և մասնակցի ստորագրությունը (յուրաքանչյուր օրվա դասընթացի հաշվետվության հետ միասին պետք է ներկայացվեն ընթացքը պատկերող լուսանկարներ և համառոտ տեսանկարահանումներ): - Հաշվետվությունը գործողությունների իրականացման ավարտից հետո պետք է ներկայացվեն Պատվիրատուին: Կատարողը դասընթացների ավարտին մասնակիցներին պետք է տրամադրի դասընթացները անցնելու վերաբերյալ համապատասխան վկայական: ***Հաշվետվությունների ներկայացման և ընդունման պահանջները.*** Ավարտական հաշվետվությունը պետք է ներկայացվի հայերեն լեզվով, խմբագրված համակարգչային շարվածքի տարբերակները՝ տպված և էլեկտրոնային կրիչով:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԵՐԻՆ՝ ԴԱՍԱՑՈՒՑԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ) ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՆՆԴԻ ՃԱՇԱՑԱՆԿ
1-ին աշխատանքային օր 1. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա): 2. Սպաս՝ 200գր, հնդկաձավարով փլավ՝ 150գր, կոտլետ (հավի մսով)՝ 50գր, աղցան «Կորեական»՝ 100գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.: 3. Սպագետտի իտալական սոուսով 200 գր, հավի միս եփած 160գր, բազուկով աղցան՝ 100գր, պանիր 30գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.: 4. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):

2-րդ աշխատանքային օր

1. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):
2. Ոսպով ապուր՝ 200գր, կարտոֆիլի տապակա՝ 150գր, երկու հատ հավի խաշած նրբերշիկ, բազուկով աղցան՝ 100գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
3. Հաճարով սնկով փլավ 200գր., երկու հատ խաշած նրբերշիկ, կաղամբով աղցան՝ 100գր, պանիր 30գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
4. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):

3-րդ աշխատանքային օր

1. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):
2. Լոբով ապուր՝ 200գր., սպագետտի՝ 150գր., կոտլետ (հավի մսով)՝ 50գր, աղցան «Կորեական»՝ 100գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ. բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
3. Բրնձով, ոսպով փլավ /250 գր/, տավարի կոտլետ, գազար, կորեական սոուս /120 գր/, պանիր 30գր , գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
4. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):

4-րդ աշխատանքային օր

1. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):
2. Սպաս՝ 200գր, հնդկաձավարով փլավ՝ 150գր, մեկ հատ խաշած հավի ձու, կաղամբով աղցան՝ 100գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
3. Հավի նագեթս 200գր , կարտոֆիլի խյուս՝ 150գր, աղցան հավի մսով, ընկույզով 150գր, պանիր 30գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
4. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):

5-րդ աշխատանքային օր

1. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):
2. Բորշ (առանց մսի)՝ 200գր., կարտոֆիլի խյուս՝ 150գր, երկու հատ հավի խաշած նրբերշիկ, կաղամբով աղցան՝ 100գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:

3. Մակարոն տավարի աղացած մսով 250 գր, գյուղական կարտոֆիլ փոքր 150գր , աղցան՝ գազար, ոլոռ, մայոնեզ, թթվասեր, կանաչի /120 գր/ պանիր 30գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 200մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր:
4. Սև թեյ կամ սև սուրճ (ծառայողի նախընտրությամբ)՝ 100մլ, թխվածք՝ 30 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված կամ գաթա):

Ծառայողին տրամադրվող սննդի ճաշացանկի յուրաքանչյուր օրվա ժամանակացույցը կազմվում է հաշվի առնելով տվյալ օրվա դասացուցակի ժամաբաշխվածությունը: Եթե ծառայողի հատուկ ուսուցման դասացուցակը վեց և ավելի օրերից է կազմված, ապա դասացուցակի 6-րդ աշխատանքային օրից սկսած սույն ճաշացանկը կրկնվում է՝ 1-ին աշխատանքային օրից հաշված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայություն

ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900001010538
ՀՎՀՀ 00476409
Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար
Լ. Այեքսանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Իրավական կրթության և
վերականգնողական ծրագրերի
իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու
փող., 162ա շենք
ՀՎՀՀ՝ 02509478
ՀՀՖՆ Գործառնական վարչություն
h/h 900018004821
Տնօրեն՝ Գևորգ Սիմոնյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված №2
«04» «Մարտի» 2026թ. կնքված
«ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-26/30» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	80521100	ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	-	-	-	6 459 075	17 224 200	17 224 200	17 224 200	17 224 200	17 224 200	17 224 200	17 224 200	17 224 200	23 683 275

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայություն

ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900001010538
ՀՎՀՀ 00476409
Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար
Լ. Ալեքսանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Իրավական կրթության և
վերականգնողական ծրագրերի
իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու
փող., 162ա շենք
ՀՎՀՀ՝ 02509478
ՀՀՖՆ Գործառնական վարչություն
հ/հ 900018004821
Տնօրեն՝ Գևորգ Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.